

**«ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿԱ -1» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ  
Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն**

<b>Ընդհանուր բնութագիր</b>	
Դասընթացի անվանում	Էկոնոմետրիկա - 1
Դասընթացի կոդ	
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Ուսումնառության տարի	Երկրորդ
Կիսամյակ	5
Կրեդիտ	4 ԵԿՓՀ
Աստիճան	Բակալավր
Ուսումնառության ձևը	Առկա
Դասընթացի պատասխանատու ամբիոն	Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն
Դասընթացի մուտքային պայմաններ	Հավանականությունների տեսություն, Տնտեսագիտության տեսություն, Համակարգչային հմտություններ, Վիճակագրություն, Խորացված մաթեմատիկա, Մասնագիտական օտար լեզու

<b>Դասախոսի տվյալներ</b>	
Դասախոսի անուն, ազգանուն	Եվգենյա Բազինյան
Կոչում, աստիճան	տ. գ. թ. , դոցենտ
Կոնտակտային տվյալներ	(+374 99) 99 10 11
Խորհրդատվության վայր և ժամանակացույց	ՀՊՏՀ, Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ, Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն, Ժամը՝ նախնական պայմանավորվածությամբ:

## Դասընթացի նկարագիր

<p><b>Դասընթացի նպատակ</b></p>	<p>Էկոնոմետրիկա – 1 դասընթացի նպատակը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիական կրթության ուսանողներին գիտելիքների մատուցումն է տնտեսական տարբեր ցուցանիշների միջև կապերի ռեգրեսիոն մոդելավորման և գնահատման վերաբերյալ, ինրպես նաև փորձի ձևավորումը: Դասընթացը հետևողականորեն և անընդհատ զարգացնում է ուսանողներին՝ տնտեսական երևույթները մեկնաբանելու, վերլուծելու և կանխատեսելու հմտությունները:</p>
<p><b>Դասընթացի խնդիրներ</b></p>	<p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Ներկայացնել տնտեսական ցուցանիշների/երևույթների կապերի գնահատման ռեգրեսիոն վերլուծության սկզբունքները և մեթոդները, արդյունքների չափման գործիքակազմը,</li> <li>▪ Հասկանալ տնտեսական կապերի մոդելավորման, ռեգրեսիոն վերլուծության և արդյունքների մեկնաբանման պրակտիկ գործիքակազմը,</li> <li>▪ Ներկայացնել էկոնոմետրիկ վերլուծությունների ժամանակ կիրառվող տվյալների ստացման աղբյուրները և դրանց կառուցվածքը,</li> <li>▪ Հասկանալ միագործոն ռեգրեսիոն մոդելի էությունը, հիմնական ենթադրությունները և գնահատված գործակիցների տնտեսագիտական նշանակությունը,</li> <li>▪ Ներկայացնել բազմաչափ ռեգրեսիոն մոդելի ընդհանուր կառուցվածքը և գործնականում դրա կիրառության համար անհրաժեշտ գործիքակազմն ու հմտությունները,</li> <li>▪ Հասկանալ տարբեր տնտեսագիտական հարցերի վերաբերյալ հիփոթեզների ձևակերպման մեխանիզմը և ստուգել դրանք համապատասխան վիճակագրական թեստերի օգնությամբ, ինչպես նաև բացատրել գնահատված պարամետրերի համար վտահելիության միջակայքերի կառուցումը և դրանց մեկնաբանումը,</li> <li>▪ Բացատրել էկոնոմետրիկ մոդելներով կանխատեսումների իրականացումը, կատարելու սցենարային վերլուծություններ և ներկայացնելու արդյունքները շահագրգիռ կողմերին,</li> <li>▪ Ուսումնասիրել որակական տվյալների հետ աշխատելու մեթոդները և դրանց կիրառության եղանակները,</li> <li>▪ Վերլուծել էկոնոմետրիկ մոդելիների գնահատման ժամանակ առաջացող խնդիրները՝ դրանք արդյունավետորեն լուծելու համար, ինչպիսիք են հետերոսկեդաստիկությունը, մոդելի սխալ սպեցիֆիկացիաները, տվյալների չափման սխալները և այլն:</li> </ul>
<p><b>Դասընթացի բովանդակություն</b></p>	<p>Դասընթացն ուսումնասիրում է երկչափ և բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության մեթոդները, գծային երկչափ և բազմաչափ մոդելների կիրառությունները տնտեսագիտական տարբեր իրավիճակները մոդելավորելիս: Քննարկում է տնտեսական փոփոխականների ներկայացման եղանակները, նկարագրական վիճակագրությունների ստացումը և մեկնաբանումը: Ընդգրկում է գծային ռեգրեսիայի էմպիրիկ հավասարման գնահատումը, ռեգրեսիոն մոդելների տարբեր բնութագրիչների վերլուծությունը, որակի և գործակիցների նշանակալիության գնահատման վիճակագրական թեստերի մեթոդաբանությունը և կիրառումը: Ներկայացնում է ֆինանսական և տնտեսական համակարգերում կառուցվածքային փոփոխությունների և որակական բնութագրիչների ներառմամբ մոդելների կառուցման և գնահատման մեթոդներ: Քննարկում է ռեգրեսիոն մոդելների ընտրության ընթացակարգերը և ընտրության տեղեկատվական չափանիշները: Ծանոթացնում է պատահական սխալների հատկությունների վերլուծության մեթոդներին: Զարգացնում է ֆինանսական տվյալների տարբեր տեսակների շարքերի հետ աշխատելու և նրանց միջև կապերի գնահատման Eviews և Excel փաթեթներով աշխատելու պրակտիկ հմտություններ:</p>

Թեմա	Թեմային հատկացվող ժամերը		Դասավանդման մեթոդ	Առաջադրանք և գրականություն	Գնահատման ձև	Դասավանդման ռեսուրս
	Դասախոսություն	Գործնական / սեմինար				
<p><b>Թեմա 1. Էկոնոմետրիկա դասընթացի ներածություն</b></p> <p>Էկոնոմետրիկա առարկան և խնդիրները:</p> <p>Էկոնոմետրիկ վերլուծություններում կիրառվող տվյալների ստացման աղբյուրները. էքսպերիմենտալ, քվազի-էքսպերիմենտալ և ոչ էքսպերիմենտալ տվյալներ:</p> <p>Էկոնոմետրիկ տվյալների կառուցվածքը. տարածական տվյալներ, ժամանակային շարքեր և պանելային տվյալներ:</p>	2	0	Դասախոսություն	<p><b>Պարտադիր գրականություն</b></p> <p>1. Jeffrey M. Wooldridge, Introductory Econometrics: A Modern Approach, 7th Edition, Michigan State University, Cengage, 2018, Գլուխ 1, էջ 1-12:</p> <p>2. Basic Econometrics, Damodar N. Gujarati, Fourth Edition, Գլուխ 1, էջ 1-16:</p> <p><b>Առաջադրանք</b></p> <p>1. Կարդալ գրականությունը, պատասխանել ինքնաստուգման հարցերին:</p> <p>2. Ընտրել տվյալների տարբեր տեսակների շարքեր, վիզուալիզացնել, կատարել համեմատություններ, քննարկել կիրառման առանձնահատկությունները:</p>	Բանավոր հարցում	Համակարգ իջներ, պրոյեկտոր
<p><b>Թեմա 2. Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության էլեմենտներ</b></p> <p>Տնտեսական վերլուծություններում առավել կիրառական հավանականությունների բաշխման օրենքներ: Փոփոխականների նկարագրական վիճակագրություններ:</p> <p>Տվյալների պարզ վերլուծությունը. փոփոխականների գծապատկերների ստացում, նկարագրական վիճակագրությունների ստացում և վերլուծություն: Հիստոգրամի կառուցում: Eviews փաթեթով աշխատելու հիմնական սկզբունքները:</p>	2	4	Դասախոսություն, վերլուծություններ, Eviews և Excel փաթեթներում վարժությունների իրականացում և արդյունքների մեկնաբանում	<p><b>Պարտադիր գրականություն</b></p> <p>1. Basic Econometrics, Damodar N. Gujarati, Fourth Edition, Գլուխ 1, էջ 887-913:</p> <p>2. Christopher Dougerti, Introduction to Econometrics, Third Edition, Գլուխ 1, էջ 1-16:</p> <p>3. Stock, J. H., &amp; Watson, M. W., Introduction to Econometrics, New York, Pearson, 2020, Գլուխ 2, էջ 55- 102, Գլուխ 3, էջ 103- 141,</p> <p><b>Առաջադրանք</b></p> <p>1. Կարդալ գրականությունը, պատասխանել ինքնաստուգման հարցերին, լուծել խնդիրները:</p> <p>2. Ընտրված տվյալների շարքերի համար հաշվել նկարագրական վիճակագրությունները և վերլուծել:</p>	Բանավոր հարցում, խնդիրների լուծում, լաբորատոր առաջադրանքների իրականացում	Համակարգ իջներ, պրոյեկտոր

<p><b>Թեմա 3. Միագործոն ռեգրեսիոն վերլուծություն</b></p> <p>Միագործոն (Երկչափ) ռեգրեսիոն մոդել, կիրառությունը:</p> <p>Գծային ռեգրեսիայի դասական մոդելը:</p> <p>Անհայտ պարամետրերի գնահատումը փոքրագույն քառակուսիների եղանակով և դրանց մեկնաբանությունը:</p> <p>Գծային ռեգրեսիայի դասական մոդելի հիմնական ենթադրությունները:</p> <p>Ռեգրեսիոն մոդելի անհայտ գործակիցների վիճակագրական գնահատականների հատկությունները: Գաուս-Մարկովի թեորեմը:</p> <p>Միագործոն ռեգրեսիոն մոդելի որակի գնահատումը (Goodness-of-Fit):</p> <p>Մոդելի սխալի անհայտ դիսպերսիայի վիճակագրական գնահատականը: Դետերմինացիայի գործակից, տնտեսագիտական և երկրաչափական մեկնաբանությունները:</p> <p>ՓՔՄ-ով ստացված գնահատականների մաթսպասումը, դիսպերսիան և կովարիացիան:</p> <p>Գնահատված գործակիցների հատկությունները (անշեղություն, արդյունավետություն և կայունություն (BLUE)):</p> <p>Մոդելի սխալը և նրա մեկնաբանությունը: Մոդելի սխալի դիսպերսիայի գնահատումը:</p> <p>Քառակուսային, log-log, log-linear և linear-log ֆունկցիոնալ տեսքերով մոդելներ:</p> <p>Կախյալ և անկախ փոփոխականների մասշտաբի փոփոխության ազդեցությունը գործակիցների վրա:</p> <p>Գծային ռեգրեսիայի էմպիրիկ հավասարման գնահատումը և մոդելի բնութագրիչների վերլուծությունը Eviews և Excel փաթեթներում որևէ տնտեսագիտական խնդրի օրինակով:</p>	8	8	<p>Դասախոսություններ, վերլուծություններ, Eviews և Excel փաթեթներում վարժությունների իրականացում և արդյունքների մեկնաբանում</p>	<p><b>Պարտադիր գրականություն</b></p> <p>1. Jeffrey M. Wooldridge, Introductory Econometrics: A Modern Approach, 7th Edition, Michigan State University, Cengage, 2018, Գլուխ 2, էջ 20-66</p> <p>2. Basic Econometrics, Damodar N. Gujarati, Fourth Edition, Գլուխ 3:</p> <p><b>Առաջադրանք</b></p> <p>1. Կարդալ գրականությունը, պատասխանել ինքնաստուգման հարցերին, լուծել խնդիրները:</p> <p>2. Ընտրված փոփոխականների զույգի համար կառուցել երկչափ ռեգրեսիա, ստուգել մոդելի որակը, գործակիցների վիճակագրական նշանակալիությունը, կառուցել գործակիցների վստահելիության միջակայքերը:</p>	<p>Բանավոր և գրավոր հարցում, խնդիրների լուծում, լաբորատոր առաջադրանքների իրականացում, թիմային աշխատանք</p>	<p>Համակարգիչներ, պրոյեկտոր</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---	---	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------

<p><b>Թեմա 4. Ռեգրեսիայի գործակիցների վերաբերյալ հիփոթեզների ստուգում և վստահելիության միջակայքեր</b></p> <p>ՓՔՄ-ով ստացված գործակիցների բաշխումը:</p> <p>Ռեգրեսիոն մոդելի գործակիցների նշանակալիության վերաբերյալ վիճակագրական վարկածների ստուգումը Ստյոյենտի և Ֆիշերի չափանիշներով:</p> <p>Մեկ գործակցի վերաբերյալ հիփոթեզների ստուգում և t թեստ:</p> <p>Միակողմանի և երկկողմանի հիփոթեզներ: p-value-ի հաշվարկումը t թեստերի համար:</p> <p>Հիփոթեզների ստուգում ռեգրեսիայի գործակիցների մեկ և մի քանի գծային կոմբինացիաների համար:</p> <p>F թեստ: F և t թեստերի կապը:</p> <p>F թեստի R քառակուսային ձևը:</p> <p>p-value-ի հաշվարկումը F թեստերի համար:</p> <p>Ռեգրեսիայի գործակիցների վստահելիության միջակայքերի կառուցում:</p>	4	4	<p>Դասախոսություններ, վերլուծություններ, Eviews և Excel փաթեթներում վարժությունների իրականացում և արդյունքների մեկնաբանում</p>	<p><b>Պարտադիր գրականություն</b></p> <p>1. Jeffrey M. Wooldridge, Introductory Econometrics: A Modern Approach, 7th Edition, Michigan State University, Cengage, 2018, Գլուխ 4, էջ 117-163</p> <p>2. Hill, R. C., Griffiths, W. E., &amp; Lim, G. C., Principles of Econometrics. John Wiley &amp; Sons, 2018, Գլուխ 5, էջ 218-222</p> <p><b>Առաջադրանք</b></p> <p>1. Կարդալ գրականությունը, պատասխանել ինքնաստուգման հարցերին, լուծել խնդիրները:</p> <p>2. Իրականացնել հիպոթեզների ստուգում՝ ռեգրեսիայի գործակիցների մեկ և մի քանի գծային կոմբինացիաների համար և դրանց վստահելիության միջակայքերի կառուցում:</p>	<p>Բանավոր և գրավոր հարցում, խնդիրների լուծում, լաբորատոր առաջադրանքների իրականացում, թիմային աշխատանք</p>	<p>Համակարգիչներ, պրոյեկտոր</p>
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---	---	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------

<p><b>Թեմա 5. Բազմաչափ ռեգրեսիոն վերլուծություն: Բազմաչափ ռեգրեսիայի մոդելը:</b></p> <p>Բազմաչափ ռեգրեսիոն մոդել: Անհայտ պարամետրերի գնահատումը բազմաչափ ռեգրեսիոն մոդելում և դրանց մեկնաբանությունը: Մոդելի հիմնական ենթադրությունները:</p> <p>Բազմաչափ ռեգրեսիոն մոդելի որակի գնահատումը:</p> <p>ՓՔՄ-ով գնահատված գործակիցների մաթսպասումը:</p> <p>Ոչ կարևոր (irrelevant) փոփոխականների ներառումը ռեգրեսիոն մոդելներում:</p> <p>Բացթողնված փոփոխականների շեղում (omitted variable bias):</p> <p>ՓՔՄ-ով գնահատված գործակիցների դիսպերիսան: Դիսպերսիայի բաղադրիչները:</p> <p>Լրիվ կոլինեարություն և բազմակոլինեարություն:</p> <p>Բազմաչափ ռեգրեսիոն մոդելի որակի գնահատումը (Goodness-of-Fit):</p> <p>Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը և մեկնաբանությունը:</p> <p>Գծային բազմաչափ ռեգրեսիայի էմպիրիկ հավասարման գնահատումը և մոդելի բնութագրիչների վերլուծությունը Eviews և Exel փաթեթներում տարբեր տնտեսագիտական խնդիրների օրինակներով:</p>	8	8	<p>Դասախոսություններ, վերլուծություններ, Eviews և Exel փաթեթներում վարժությունների իրականացում և արդյունքների մեկնաբանում</p>	<p><b>Պարտադիր գրականություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Jeffrey M. Wooldridge, Introductory Econometrics: A Modern Approach, 7th Edition, Michigan State University, Cengage, 2018, Գլուխ 3, էջ 66-116</li> <li>2. Basic Econometrics, Damodar N. Gujarati, Fourth Edition, Գլուխ 7, էջ 202-334</li> <li>3. Econometrics by Example, Damodar N. Gujarati, 2011, 2012, Գլուխ 1, էջ 2-19</li> <li>4. Stock, J. H., &amp; Watson, M. W., Introduction to Econometrics, New York, Pearson, 2020, Գլուխ 6, էջ 211- 225</li> </ol> <p><b>Առաջադրանք</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կարդալ գրականությունը, պատասխանել ինքնաստուգման հարցերին, լուծել խնդիրները:</li> <li>2. Ընդլայնել նախորդ թեմայի շրջանակներում գնահատված ռեգրեսիոն մոդելը՝ ավելացնելով նոր փոփոխականներ, ներառյալ՝ կեղծ փոփոխականներ: Գնահատել ռեգրեսիոն մոդելի տարբեր ընդլայնումները, կատարել համեմատական վերլուծություն, ընտրել լավագույն մոդելը:</li> </ol>	<p>Բանավոր և գրավոր հարցում, խնդիրների լուծում, լաբորատոր առաջադրանքների իրականացում, թիմային աշխատանք</p>	<p>Համակարգիչներ, պրոյեկտոր</p>
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---	---	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------

<p><b>Թեմա 6. Բազմաչափ ռեգրեսիոն վերլուծություն որակական տվյալների դեպքում: Կեղծ փոփոխականներ</b></p> <p>Որակական տվյալների էությունը, նկարագրությունը և կիրառությունը:</p> <p>Մեկ բացատրող կեղծ փոփոխականով ռեգրեսիոն մոդելներ: Գնահատված գործակիցների մեկնաբանությունը:</p> <p>Կեղծ փոփոխականների կիրառումը կարգային տվյալների դեպքում: Հատումներ (interaction) կեղծ փոփոխականներ հետ:</p> <p>Կեղծ փոփոխականների տարբեր թեքություններով ռեգրեսիոն մոդելներ:</p> <p>Կախյալ կեղծ փոփոխականով ռեգրեսիոն մոդելներ (գծային հավանականային մոդելներ):</p> <p>Կեղծ փոփոխականների ներմուծմամբ տնտեսագիտական տարբեր իրավիճակների ռեգրեսիոն մոդելների կառուցում, գնահատում և մեկնաբանում:</p> <p>Կառուցվածքային փոփոխությունների գնահատման Չոուի թեստ:</p>	4	4		<p align="center"><b>Պարտադիր գրականություն</b></p> <p>1. Jeffrey M. Wooldridge, Introductory Econometrics: A Modern Approach, 7th Edition, Michigan State University, Cengage, 2018, Գլուխ 7, էջ 220-261</p> <p align="center"><b>Առաջադրանք</b></p> <p>1. Կարդալ գրականությունը, պատասխանել հինքնաստուգման հարցերին, լուծել խնդիրները:</p> <p>2. Ընդլայնել նախորդ թեմայի շրջանակներում գնահատված ռեգրեսիոն մոդելը՝ ավելացնելով նոր՝ կեղծ փոփոխականներ:</p>		
<p><b>Թեմա 7. Պատահական սխալների հատկությունների վերլուծություն և դիագնոստիկա (Հետերոսկեդաստիկություն, Ավտոկոռելյացիա)</b></p> <p><b>Հետերոսկեդաստիկության</b> էությունը և հետանքները ՓՔՄ համար:</p> <p>Հետերոսկեդաստիկության հայտնաբերման թեստեր: t, F և LM թեստերի հաշվարկումը հետերոսկեդաստիկության դեպքում:</p> <p>Հետերոսկեդաստիկության ստուգումը:</p> <p>Մնացորդների գրաֆիկներ: Breusch-Pagan-ի, White-ի և Goldfeld-Quandt-ի թեստերը: Կշռված փոքրագույն քառակուսիների մեթոդը (WLS): Փոքրագույն քառակուսիների ընդհանրացված մեթոդը (GLS):</p> <p>Հետերոսկեդաստիկությունը գծային</p>	4	4	<p>Դասախոսություններ, վերլուծություններ, Eviews և Excel փաթեթներում վարժությունների իրականացում և արդյունքների մեկնաբանում</p>	<p align="center"><b>Պարտադիր գրականություն</b></p> <p>1. Basic Econometrics, Damodar N. Gujarati, Fourth Edition, Գլուխ 13, էջ 506-523</p> <p>2. Econometrics by Example, Damodar N. Gujarati, 2011, 2012, Գլուխ 6, էջ 68-114</p> <p align="center"><b>Առաջադրանք</b></p> <p>1. Կարդալ գրականությունը, պատասխանել հինքնաստուգման հարցերին, լուծել խնդիրները:</p> <p>2. Իրականացնել նախորդ թեմայի շրջանակներում գնահատված ռեգրեսիոն մոդելների ավտոկոռելյացիայի և հետերոսկեդաստիկության դիագնոստիկա:</p>	<p>Բանավոր հարցում, լաբորատոր առաջադրանքների իրականացում</p>	<p>Համակարգիչներ, պրոյեկտոր</p>

<p>հավանականային մոդելում:</p> <p>Հետերոսկեդաստիկության խնդրի լուծումը:</p> <p><b>Ավտոկոռելյացիա մնացորդներում:</b> Դարբին Վաթսոնի չափանիշ: Մնացորդներում ավտոկոռելյացիայի բացակայության ստուգման Լագրանժի բազմապատկիչների թեստը:</p> <p>Eviews ծրագրային փաթեթում հետերոսկեդաստիկության և ավտոկոռելյացիայի դիագնոստիկայի իրականացում և լուծում:</p>					
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--	--	--

### Դասընթացի վերջնարդյունքներ

- Գիտի էկոնոմետրիկ վերլուծությունների ժամանակ կիրառվող տվյալների ստացման աղբյուրները և դրանց կառուցվածքը,
- Գիտի որակական տվյալների հետ աշխատելու մեթոդները և դրանց կիրառության եղանակները,
- Հասկանում է բազմաչափ ռեգրեսիոն մոդելի ընդհանուր կառուցվածքը և գործնականում դրա կիրառության համար անհրաժեշտ գործիքակազմն և հմտությունները,
- Կարողանում է բացատրել միագործոն ռեգրեսիոն մոդելի էությունը, հիմնական ենթադրությունները և գնահատված գործակիցների տնտեսագիտական նշանակությունը,
- Կարողանում է ձևավորելու հիփոթեզներ տարբեր տնտեսագիտական հարցերի վերաբերյալ և ստուգել դրանք համապատասխան վիճակագրական թեստերի օգնությամբ, ինչպես նաև կառուցել վտահելիության միջակայքեր գնահատված պարամետրերի համար և մեկնաբանել դրանք,
- Կարողանում է իրականացնելու էկոնոմետրիկ մոդելներով կանխատեսումներ, կատարելու սցենարային վերլուծություններ և ներկայացնելու արդյունքները շահագրգիռ կողմերին,
- Կարողանում է էկոնոմետրիկ մոդելիների գնահատված ժամանակ առաջացող խնդիրները արդյունավետորեն լուծել, ինչպիսիք են հետերոսկեդաստիկությունը, մոդելի սխալ սպեցիֆիկացիաները, տվյալների չափման սխալները և այլն:

### Դասախոսի բեռնվածություն

<b>Դասախոսություն</b>	32 ժամ
<b>Սեմինար</b>	32 ժամ
<b>Ստուգարք</b>	Հաշվարկվում է ըստ ուսանողների թվի
<b>Խորհրդատվություն</b>	
<b>Ընդամենը</b>	<b>64 ժամ (առանց ստուգարքի ժամերի)</b>



## Հավելված 1

### Դասընթացը դասավանդող դասախոսների ցուցակ

Դասախոսի անուն, ազգանուն	Կոչում, աստիճան	Կոնտակտային տվյալներ
Եվգենյա Բազինյան	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ	<a href="mailto:eva_bazinyan@yahoo.com">eva_bazinyan@yahoo.com</a> 099991011
Կարինե Հարությունյան	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ	<a href="mailto:harutyunyan_k@yahoo.com">harutyunyan_k@yahoo.com</a> 091223804
Գևորգ Ասլանյան	տնտեսագիտության թեկնածու	<a href="mailto:gevorgaslanyan97@gmail.com">gevorgaslanyan97@gmail.com</a> 093505040
Սուրեն Լևոնյան	տնտեսագիտության թեկնածու	<a href="mailto:levonyansur@gmail.com">levonyansur@gmail.com</a> , 094036304
Մարիանա Խչեյան	դասախոս	<a href="mailto:marianakhcheyan@gmail.com">marianakhcheyan@gmail.com</a> 093726026

## Հավելված 2

### Գրականության ցանկ

#### ➤ Պարտադիր

1. Jeffrey M. Wooldridge, Introductory Econometrics: A Modern Approach, 7<sup>th</sup> Edition, Michigan State University, Cengage, 2018,
2. Hill, R. C., Griffiths, W. E., & Lim, G. C., Principles of Econometrics. John Wiley & Sons, 2018,
3. Stock, J. H., & Watson, M. W., Introduction to Econometrics, New York, Pearson, 2020
4. Basic Econometrics, Damodar N. Gujarati, Fourth and Fifth Editions
5. Econometrics by Example, Damodar N. Gujarati, 2011, 2012, 2015

#### ➤ Լրացուցիչ

1. И. И. Елисеева и др., Эконометрика, учебник для вузов, под редакцией И. И. Елисеевой, Москва, Издательство Юрайт, 2024, 449 с.
2. Ջրբաշյան Լ.Ա., Էկոնոմետրիկ մոդել ավորումը Eviews կազմի օգտագործմամբ, Ուսու մասնագրական ձեռնարկ, Երևան, Լոր-Նար, 2013թ.
3. Brooks, Chris. Introductory Econometrics for Finance, EViews Guide to Accompany Introductory Econometrics for Finance, Cambridge University Press, 2019